

ՃԱՆԱԴԱՐԶՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՄԵՐ ԱՐՅԱՆ ՀԵՏԱԳԾՈՎ



ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



ԼԵՎՈՆ ԴՈՒՆԱՍԱԼՅԱՆ

Սկիզբը՝ 11/14-րդ համարում


Վանում մենք կանգ էինք առել հյուրանոցում, որը պատկանում էր քրդերին, և ըստ նրանց վերաբերմունքի ևս մեկ անգամ համոզվեցինք, որ քրդերը մեզ համարում են բարեկամ: Մեր հաջորդ ծրագրավորված կետը Աղթամար կղզին էր, որը գտնվում էր Վան քաղաքից ոչ այնքան հեռու: Այնտեղ հասնելու համար մենք նավակ վարձակալեցինք: Վանա լիճը, ունենալով գեղեցիկ կապտականաչավուն երանգ, աշխարհի ամենաաղի լճերից մեկն է, որտեղ կա ընդամենը մեկ ձկնատեսակ՝ Վանի հանրահայտ տառելի ձուկը: Նավակի մեջ մեզ հետ դեպի Աղթամար կղզի ճանապարհորդում էին նաև երեք արտերկրացիներ՝ Իտալիայից և Գերմանիայից: Նրանք հստակ գիտեին եկեղեցու պատմությունը և այն փաստը, որ եկեղեցին կառուցել էին հայերը: Մոտ կես ժամից մենք հասանք կղզի, որը բավականին մարդաշատ էր: Թուրք զբոսաշրջիկներից մեկը նստել էր խաչքարի վրա և արևածաղիկ էր չրթում: Կղզուց անմիջապես հետո մենք շարժվեցինք դեպի Սուրբ Խաչ եկեղեցի (10-րդ դար), որի մոտից բացվում է անզուգական մի տեսարան դեպի Վանա լիճը: Եկեղեցին բացառիկ գեղարվեստական արժեք էր՝ շնորհիվ այն աշխատանքի, որը կատարվել էր նրա արտաքին պատերի վրա՝ ի դեմս դրսի բարձրաքանդակների և ներսի որմնանկարների, բիրիլական տեսարանների: Եկեղեցու

տարածքում գտնվում էին տասնյակ խաչքարեր՝ հիմնականում կիսաքանդ վիճակում: Մտնելով եկեղեցի՝ ի զարմանս մեզ, այնտեղ հայտնաբերեցինք մի վահանակ, որի վրա երեք լեզուներով, այդ թվում նաև հայերեն գրված էր *մոմավառության վայր*: Այդ վահանակը տեղադրված էր վերանորոգումից հետո: Նաև վերականգնվել էին պատերի սրբանկարները, և ընդհանուր առմամբ եկեղեցին գտնվում էր բարվոք վիճակում: Շարժվելով ետ՝ դեպի Վան քաղաք, մենք այցելեցինք Վանի Ուրարտական ամրոցը: Ետ գնալու ճանապարհին նավապետն արդեն երկրորդ անգամ մեզ հարցնում էր՝ արդյոք մենք եկել ենք մեր պապերի թողած ոսկիների ետևից և չսպասելով մեր պատասխանին՝ ասաց, որ կարող է մեզ ապահովել տեխնիկայով այն պայմանով, որ մենք նրան փոխհատուցենք մեր գտածի 10%-ի չափով: Նա չէր ուզում հավատալ, որ մենք այնտեղ էինք գտնվում զուտ բարոյական նկատառումներից ելնելով: Քրդերը բացահայտ խոսում էին ցեղասպանության մասին, բայց մոռանում էին, որ արյունահեղ տարիներին իրենք էլ են ներդրել իրենց լուծման այդ «գործում»: Այժմ նրանք մեզ վերաբերում են ինչպես դաշնակիցների՝ ընդհանուր թշնամու դեմ պատերազմում: Աղթամարից մեզ հետ վերադարձող գերմանացի զբոսաշրջիկը պատմեց, որ նա արդեն ճանապարհորդել է հեծանիվով ողջ Իրանի տարածքով և Իրանի հյուսիս-արևմուտքում հանդիպել է բազ-



ու Վանա լիճը: Հաջորդ օրը մենք այցելեցինք ևս մեկ եկեղեցական համալիր՝ Վարագավանք անվանումով: Ծրջակա գյուղը կոչվում էր Յեդիկիլիսե՝ *յոթ եկեղեցի*, քանի որ ժամանակին համալիրը բաղկացած է եղել յոթ եկեղեցիներից: Յեդիկիլիսեն գտնվում էր Վան քաղաքի հարևանությամբ և լավ պահպանված էր, սակայն որևէ քարտեզի վրա նշված չէր: Այս անգամ մենք հաջողակ գտնվեցինք, քանի որ գորգերի խանութի տնօրենը, իմանալով, որ մենք հայ ենք, մեզ առաջարկեց ուղեկցել դեպի այդ եկեղեցին: Եկեղեցու մեջ կային բազմաթիվ լուսանկարներ՝ պահպանված դեռ 20-րդ դարի սկզբից, որտեղ պատկերված էր շրջակա գյուղերի և Վան քաղաքի հայ բնակչության առօրյան: Գրանցելով մեր անունները մատյանում՝ մենք հեռացանք դեպի Մուշ:

Մեզ հաջողվեց բավականին շուտ հասնել Մուշ, քանի որ Թուրքիայում ճանապարհները գտնվում են բարվոք վիճակում: Մենք լսել էինք, որ Մուշ քաղաքում բնակվում էին որոշ կրիպտոհայեր, որոնք չնայած իրենց մահմեդական լինելուն, տանը պահպանում էին քրիստոնեական ավանդույթները, բայց մեզ չհաջողվեց հանդիպել նրանց ժամանակի աղության պատճառով: Մուշ քաղաքը բավականին ուշագրավ էր՝ չնայած իր փոքր չափերին (80 հազ. բնակիչ): Ողջ Թուրքիայում ամենուրեք կարելի էր հանդիպել ինտերնետ-սրճարաններ, որոնք թուրքերի մեջ մեծ տարածում ունեին: Ողջ ճանապարհի ընթացքում մենք հայտնում էինք մեր տպավորությունները ֆորումում (*forum.hayastan.com*) և տեղադրում էինք լուսանկարները:



մաքիվ հայկական հուշարձանների: Նրա խոսքերով, դրանք ավելի լավ էին պահպանվել, քան Թուրքիայում: Ինչպես պարզվեց, նա պատրաստվում էր ևս ութ ամիս հեծանիվով ճանապարհորդել Եվրոպայով և Ասիայով:

Թուրքերը շատ դրական են վերաբերվում կատուներին՝ որպես կենդանիների և դրանում մենք ևս մեկ անգամ համոզվեցինք, երբ Վան քաղաքում այցելեցինք Վանա կատվի տուն-թանգարան, որտեղ բնակվում էր Վանա կատուն իր ձագերով: Այդ տուն-թանգարանը զբոսաշրջիկների մոտ առաջացնում էր շատ մեծ հետաքրքրություն, գրեթե այնքան, որքան հարևանությամբ գտնվող Ուրարտական ամրոցը՝ Սիեթի դուռը: Այն շատ հրապուրիչ էր, քանզի մեր տեսածի մեջ ամենահնագույն կառույցն էր, որի գազաթից երևում էր ողջ Վան քաղաքն



Նանրահայտ Մշո դաշտավայրը շատ տպավորիչ էր թե՛ իր չափերով, թե՛ բերքի առատությամբ և թե՛ իր պատմությամբ: Դաշտավայրի վերջում գտնվում էր Մետրոպ Մաշտոցի ծննդա-

նախնիների հուշարձանների: Նրա խոսքերով, դրանք ավելի լավ էին պահպանվել, քան Թուրքիայում: Ինչպես պարզվեց, նա պատրաստվում էր ևս ութ ամիս հեծանիվով ճանապարհորդել Եվրոպայով և Ասիայով:

Մեզ հաջողվեց բավականին շուտ հասնել Մուշ, քանի որ Թուրքիայում ճանապարհները գտնվում են բարվոք վիճակում: Մենք լսել էինք, որ Մուշ քաղաքում բնակվում էին որոշ կրիպտոհայեր, որոնք չնայած իրենց մահմեդական լինելուն, տանը պահպանում էին քրիստոնեական ավանդույթները, բայց մեզ չհաջողվեց հանդիպել նրանց ժամանակի աղության պատճառով: Մուշ քաղաքը բավականին ուշագրավ էր՝ չնայած իր փոքր չափերին (80 հազ. բնակիչ): Ողջ Թուրքիայում ամենուրեք կարելի էր հանդիպել ինտերնետ-սրճարաններ, որոնք թուրքերի մեջ մեծ տարածում ունեին: Ողջ ճանապարհի ընթացքում մենք հայտնում էինք մեր տպավորությունները ֆորումում (*forum.hayastan.com*) և տեղադրում էինք լուսանկարները:

Նանրահայտ Մշո դաշտավայրը շատ տպավորիչ էր թե՛ իր չափերով, թե՛ բերքի առատությամբ և թե՛ իր պատմությամբ: Դաշտավայրի վերջում գտնվում էր Մետրոպ Մաշտոցի ծննդա-

վայրը՝ Հացեկաց գյուղը: Մուշ քաղաքի հարևանությամբ գտնվում է հանրահայտ Մուրբ Կարապետ եկեղեցին, որն այսօր վերածվել է գոմի: Մուշում մենք համտեսեցինք Մշո խաղողը, որին տեղացիներն անվանում էին հայկական խաղող:

Մեզ մնացել էր ճանապարհորդելու ևս երկու պատմական քաղաքներ՝ Էրզրումն ու Երզնկան: Էրզրումը միակ տեղն էր ամբողջ Թուրքիայում, որտեղ կա ցեղասպանության հուշարձան: *Ըստ թուրքերի՝ ցեղասպանությունը գործել էին հայերը թուրքերի հանդեպ:* Մեզ հաջողվեց գտնել բազմաթիվ պահպանված տներ քաղաքի պատմական կենտրոնում: Անցել է արդեն շուրջ մեկ դար, բայց շենքերը կանգուն են և մինչ այժմ պահպանել են իրենց հմայքը: Էրզրումը հայերի համար գրեթե ամենաքջնամական և վտանգավոր քաղաքն է ողջ Թուրքիայի տարածքում: Այդ վերաբերմունքը կարելի է զգալ նաև մթնոլորտից: Երզնկան փոքր քաղաք էր (300 հազ. բնակիչ), որտեղ հայկական գրեթե ոչինչ չէր պահպանվել: Այն պատմական Հայաստանի արևմտյան սահմանն է: Ճանապարհը դեպի Ստամբուլ անցնում էր Թուրքիայի մայրաքաղաք Անկարայով, որն ավելի էր նման Եվրոպային, քան յուրաքանչյուր այլ վայր Թուրքիայի տարածքում՝ իր կանաչապատ տարածքներով, երթևեկության կանոններով: Չնայած 3մլն. բնակչության՝ քաղաքն աչքի էր ընկնում իր հանգիստ առօրյայով: Ճանապարհը դեպի Ստամբուլ վճարովի էր, որը լավագույնն էր ամբողջ Թուրքիայի տարածքում, չնայած այն հանգամանքին, որ ողջ Թուրքիայի տարածքում ճանապարհաշինարարական աշխատանքներ էին ընթանում: Թուրքիան շատ ռազմականացված երկիր է, ինչն ակնհայտ է ամենուր, քանզի գրեթե ամեն քայլափոխի ճանապարհներին կարելի է հանդիպել զինվորական հենակետեր, իսկ մեծ քաղաքների շրջակայքում գտնվում են ռազմական բազաներ:

Ստամբուլում կա մոտ երեսուն հայկական եկեղեցի և երկու գերեզմանատուն՝ կաթոլիկական և լուսավորչական: Կաթոլիկական գերեզմանատան տնօրենը մեզ տեղեկացրեց, որ այսօրվա Ստամբուլում (Պոլսում) ավելի քիչ տեղաբնակ հայ է մնացել, քան Հայաստանի քաղաքացիություն ունեցող հայերը, որոնք գտնվում են այնտեղ աշխատանքի նպատակով (30 հազ.): Այդ գերեզմանատները հայտնի էին Շիշլիի գերեզմանատուն անվանումով: Ստամբուլի Մայր տաճարը և մոտ տասնյակ եկեղեցիները գործում էին և ունեին բազմաթիվ այցելուներ: Եկեղեցում կային սևամորթ եթովպացի աղոթողներ, որոնք այցելում են հայկական եկեղեցի, քանի որ իրենց հավատքը, կրոնը հայկական լուսավորչական է ու նաև այն պատճառով, որ Ստամբուլում չկա եթովպական եկեղեցի: Եկեղեցու տարածքում գտնվում է Ստամբուլում միակ հայկական դպրոցը, որտեղ տեղաբնիկ հայերն ինչ-ինչ չափով հնարավորություն են տալիս իրենց երեխաներին կրթվելու հայերեն լեզվով...

Ջրուցեց ԼԻԱՆԱ ՍԱՆՈՒՉԱՐՅԱՆԸ

